





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀԸ



յր մեծ անկաւ յիւրայելք:—Այս խոսքերով էր ողբում Իւրայելի ժողովուրդն իր մեծ կորուստը՝ Դավիթ մարգարեի մահը:

Այս խոսքերով է ողբում այսօր նաև հայ հավատացյալ ժողովուրդը մեր օրերի մեծ եկեղեցականներից մեկի՝ հայրենասեր և առաքելաշավիղ Գարեգին Կաթողիկոսի մահը: Մանր է Հայաստանայց Առաքելական եկեղեցու կրած անփոխարինելի կորուստը:

Գարեգին Կաթողիկոսը վերջին հիսնամյակի վաստակավոր ու հեղինակավոր հոգեվարականներից էր իբրև ներհուն գիտնական, բազմամուտ պատմագիր, հոգեշունչ բեմբասաց, հայրենասեր եկեղեցական, հայ մշակույթի աննահանջ ու շնորհրդեկալ աշխատավոր, մեր պատմական անցյալի մշակութային արժեքներն երևան հանող հնագրագետ, հայ ինֆեուրույն արվեստի՝ մանրանկարչության աննկուն պրպտող, անձնվեր հովիվ ու առաջնորդ, առաքինի ու շիտակ հոգևորական, արի, անգուգական ու պատվական հայրենասեր: Հանգուցյալն իր բովանդակ գիտակցական կյանքին առանց մնացորդի նվիրեց իր ժողովրդին, իր եկեղեցուն, իր Հայրենիքին, նվիրեց հայ գրին ու գրականության, հայ արվեստին և հայ մշակույթին:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի մահը անշափ մեծ վիշտ պատճառեց առանձնապես վեհափառ Գեորգ Զ.ին, որի հետ միասին հիշարժան մի օր նրանք ծուկն են չոփել Լուսավարչի կանթեղի առաջ և ուխտել ծառայելու Հայ եկեղեցուն, Հայ ժողովրդին,

Հայ Հայրենիքին: Նրանք իրար հետ կապվել էին մեծ բարեկամությամբ այնպես, ինչպես կարող են կապվել երկու մեծ հոգիներ, սիրել իրար այնպես, ինչպես Դավիթը սիրում էր Հովնաթանին: Գեորգյան ճեմարանի գրասեղաններից սկսած մինչև այն պատմական պահը, երբ պարտականության, կոշման ձայնը նրանց հրավիրեց հայ ժողովրդի հոգևոր սպասի բարձրագույն ծառայության, նրանք գտնվել են սրտառույ մտերմության մեջ: Եվ նրանց սրտի, մտքի, հոգու մեծ բարեկամությունը էլ ավելի անց նրանց Հովվապետության տարիներին:

Գարեգին վեհը ծնվել է 1867 թվականին գյուղացու աղաթ, բայց կրոնական և ազգային ավանդություններով հարուստ բնատեղիում: «Ես աղաթ հասարակ գյուղացու զավակ եմ,— գրել է Հանգուցյալը,— բայց եթե այսօր եմ՝ ինչ որ եմ՝ պարտական եմ միայն իմ ազգին, իմ ժողովրդին, իմ եկեղեցուն, Սուրբ էջմիածնին: Ես կարող էի նախիր պահող կամ տավարած լինել. այսօր Հովվապետ եմ՝ պարտական լինելով իմ եկեղեցուն և հոտին»:

Համեստ, բարեպաշտ գյուղացու վիճակից մինչև Հայ եկեղեցու նվիրապետության բարձրագույն գագաթներից մեկը, նա բարձրացել է շնորհիվ իր անընկճելի հավատին, շնորհիվ իր անձնական և բարոյական հագվածությամբ շնորհներին, որոնց խոր արմատը գտնվում է նրան ծնունդ տվող ժողովրդի հոգեկան երակներում:

Հայրապետական Աթոռի վրա նա փառավորեց Հայաստանայց եկեղեցին, բարձրացրեց եկեղեցու առաջնորդ հեղինակությունը, իր բարձր անձնավորության հմայ-

հով և իր սեփական ձեռքով իր անմահությունը կերտեց, որպես հավատի մարդ, որպես պայծառ ջան Հայաստանյայց եկեղեցու, որպես եղանակ վարդապետ, բանին կենաց փարոզիչ: «Ամենայն հարգանք և գնահատություն, նյութական ու բարոյական աջակցություն, որ կապվել է և կկապվի իմ անվան և գործունեության հետ,— հայտարարել է նա,— ընդունում եմ ոչ մեր հասցեին, այլ այն գաղափարի և մտքի իրացման, որի աշխատավորն եմ»:

Փառավոր ուղի է անցել Հանգուցյալը: Մեծ է նրա ավանդը Հայաստանյայց եկեղեցու բարգավաճման, հայ արվեստի պատմության, մշակույթի ուսումնասիրության գործում: Նրա կյանքն ու թեղմնավոր, բազմակողմանի գործունեությունը ներշնչող օրինակը կարող են հանդիսանալ բոլոր նրանց, ովքեր ուխտել են եկեղեցու սուրբ սեղանի առաջ՝ ծառայել անճանաչելի ու բոլորակողմ Հայաստանյայց եկեղեցուն, հայ ժողովրդին, Հայ Հայրենիքին:

Սարկավագությունից ընդհուպ մինչև Հայրապետական Արքոպետ, նա կատարել է անձնավեր, շնորհիմնակալ ծառայություններ: Նրա գործունեությունը չափազանց ընդարձակ հորիզոններ է ընդգրկել: Ո՛ր և ե՛րբ Հայրապետական Մայր Արքոպետ կարիք է զգացել նրան, ո՛ր և ե՛րբ իր ժողովրդի ցավն ու դառն վիճակը կանչել են նրան, նա վազել է այդ ձայնի ետևից, անվարան, հավատարիմ իր կոչման և պարտականություններին, զինվորականի պարտանաչառությամբ:

Ահա ձեզ 1915 թվականը, մեր գաղթականության տարին, երբ թշվառությունն ու համահարակր անկարագրելի ռեժիմներ են գործում. չկա դեղ ու դարման. անձնագրոն եկեղեցականը, բարի սամարացու նման, իր վիրավոր ու սգավոր ժողովրդի մեջն է, իր դժբախտ, լքված հոտի գլխին. մխիթարում է, աղոթում ու իր ժողովրդի անլուր տառապանքին դիմաց՝ մղկտում, արտասվում: «Իր եկեղեցական, ժողովրդի գավակ, ես ապրել ու զգացել եմ իմ ժողովրդի ցավն ու հուսահատությունը իր ամբողջ խորությամբ», — գրում է նա:

1934 թվականին նա նշանակվեց Կարողիկոսական լիազոր նվիրակ: Պառակտվել էր տարագիր Սիլվոսթր. նա որպես ֆաղցրության ցող ու հաշտության աղավնի, իր փայլող հոգով հանդարտեցրեց բորբոքված կրքերը, և բոլորին հաջողվեց համախմբել Մայր Արքոպետի և վերածնվող Հայրենիքի ջերմացնող գաղափարի շուրջ: ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ — ահա նրա առաքելության ալփան ու օմեգան: «Նա մի անձնավորություն է, — ինչպես բնորոշել է

նրան էջմիածնի պատվիրակը 1944 թվականին, — որի սրտի մեկ կեսը Հայաստանն է, իսկ մյուսը՝ էջմիածինը»:

Նրա գահակալությունը Մեծի Տանն Կիլիկիո պատմական Արքոպետ եղել է կարևոր, բայց փառավոր գործունեությամբ բեղուն: Նրա շնչով ու ղեկավարությամբ Կիլիկյան աստվածական Արքոպետ ապրեց կրոնական, ազգային, մշակութային վերելքի մի նոր շրջան:

Կինելով Գեորգյան ձեմարանի սան, Մայր Արքոպետ հարագատ միաբան, հանգուցյալ վեհեր բուռն սիրով սիրել է իր եկեղեցին, սիրել է Հայաստանյայց եկեղեցու դարավոր ու պատմական կենտրոն Սուրբ էջմիածինը՝ իր մտքի, հոգու, սրտի օրհներ: Ուր էլ որ գնացել է իբր առաջնորդ, տեսուչ, նվիրակ, նա իր հետ տարել է պաշտամունք էջմիածնի նկատմամբ: Նրա փարոզների սովորական բնաբանն է եղել՝ «Եթե մոռացայց զԲեզ էջմիածին, մոռացի զիս աչ իմ»:

Իր եկեղեցական ողջ գործունեության ընթացքում նա ունեցել է միայն մեկ ձգտում — ազգը, ժողովուրդը կապել էջմիածնի հետ, կենտրոնի հետ. «Ընդունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերագան դիրքը, — հայտարարել է նա, — կկամենայինք, որ ըստ ամենայնի պահպանվեր նրանց պատշաճ հարաբերությունը ըստ պաշտոնի և կոչման: Միասնականությունը կամենում եմ իրականացած տեսնել գիտակցական փոխադարձ հասկացողությամբ և հարգանքով կատարված պարտերի, նպատակների և ձրգտումների միության մեջ: Մենք իբրև Կիլիկիո Հայրապետական Արքոպետ Գահակալ պատրաստ ենք Մեր կարելին բերել, հավերժացնել ավելի սերտ, ավելի գիտակցական և միևնույն ժամանակ ավելի շրջանայաց հարաբերություն Մայր Արքոպետ հետ»:

Ամենայն Հայոց Հայրապետությունը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը իրար հետ շաղկապվեցին ավելի սերտ սիրով և եղբայրությամբ:

Ամենայն Հայոց Կենսափառ Հայրապետը շատ բարձր է գնահատել Գարեգին Վեհի էջմիածնի նկատմամբ ունեցած հետևողական ֆաղափականությունը: «Անընշմարելի չափի անցնի ու ընդգծելի է Ձեր գործունեության և այն գիծը, որ Դուք՝ Ձեր գործունեության բոլոր ասպարեզներում, միշտ հավատարիմ եք մնացել Ձեր վանական ուխտին՝ ամբողջովին նվիրվել Սուրբ էջմիածնին, որ Մայր է հայ եկեղեցիներին, որ հայ ժողովրդի պատմական դաստիարակն է ազգային, կրոնական և մշակութային ասպարեզներում»:

Ցանկալի է, որ հետ այսորիկ ավելի՛ ամրապնդվի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միասիրտ համերաշխությունը, որի համար իր ողջ կյանքը նվիրեց երջանկահիշատակ Գարեգին Վեհեր: Էջմիածինն ու Անթիլիասը ունեն միևնույն մեկնակետն ու նպատակը—հայ ժողովրդի հոգում վառ պահել Բրիտանական հավատի ջանք, կրոնական, ազգային ավանդությունները, հայ մշակույթի սերը, նվիրվածություն Հայրենիքին, և արտասանմանում անող մեր նոր սերունդի դաստիարակությունը տանել այդ ուղղությամբ: Նպատակների նույնությունը ստեղծել է գործակցության, համերաշխության, միասնության լուրջ, անմիջական և գործնական գաղափար: Հարկավոր է պաշտպանել մեր ժողովրդի միասնությունը և մշակութային ընդհանրությունը: Հարկավոր է պաշտպանել հավատացյալ հայ հոտը թրջնամիների հարձակումներից, վառ ու պայծառ պահել հոգիների մեջ հավատի հուրը, կրոնի սրբությունները, հայրենի նվիրակաւորությունները: Երկու Հայրապետական Աթոռներն էլ, այժմ մանավանդ, ունեն կատարելի պատմական խոշոր դեր: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, այսօր ավելի քան մի այլ ժամանակ, կարիք ունի Գարեգին Վեհի նման նվիրված, շիտակ, անկեղծ, հավատավոր հոգևորականների, որոնք վառ պահեն հայ հավատը հայ սրտերում, հանուն Ամենայն Հայոց Հայրապետության, հանուն Սուրբ Էջմիածնի:

Հանգուցյալ Հայրապետը ո՛չ միայն շերմեռանդ էջմիածնապետ եկեղեցական է եղել, այլև բոցաշունչ հայրենասեր: Հայաստանյայց Եկեղեցին դարեւ շարունակ եղել է հայ ժողովրդի հայրենասիրության Սրբություն Սրբոցը: Հայաստանյայց Եկեղեցու կամարների տակ մի՛շտ հնչել է հայրենասիրության սրբազան գաղափարը: Մեր մեծանուն հոգևորականները եղել են միաժամանակ մեծ հայրենասերներ, ինչպիսիք են Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Մեծն Ներսես Պարթև, Սուրբ Սահակ, Մեսրոպ Մաշտոց, Ղևոնդ Երեց, Ներսես Առաքելացի, Խրիմյան Հայրիկ, Գեորգ Զ.: Այդ շարքից էր նաև հանգուցյալ Գարեգին Վեհը. եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը նրա կյանքի էությունն են հանդիսացել. «Հայաստանյայց Եկեղեցին կենտրոնն է հայրենասիրության,— գրել է նա:— Կյանքում շատ երազներ եմ ունեցել, որոնք իրագործվել են. երազել եմ իմ Հայրենիքի վերականգնումը, ծաղկումն ու զարգացումը, որը իրականացել է իմ երազից էլ շփեղ: Մեր անցյալ տարիները թշվառության տարիներ էին: Այն արհավիրքը, որ

բաժին ընկավ մեր ժողովրդին, մեր Եկեղեցուն, անհախճաբաց է վերջին հարշուրամյակում: Կոտորվեցինք սրի հարվածների տակ, մտրակի տակ: Բայց, այժմ, վերջ են գտել մեր տառապանքները: Իրողությունն այն է, որ մենք, որ ոչինչ չենք ունեցել, այժմ ունենք Հայրենիք, պետականություն, արվեստ, գրականություն, քառեր, կոնսերվատորիա և հազարավոր վարժարաններ: Ասոված մեզ համար նոր վերածնության մի շրջան է ստեղծել: Իմ հոգին վկայում է, և ես հավատում եմ, որ մեր ժողովրդի համար նոր ՍԿԻՋԲ և ՈՍԿԵԴԱՐ է արվել: Թող ծաղկի մեր եռաբողբոջ Հայրենիքը, գրական, գեղարվեստական և մշակութային բոլոր ոլորտներում: Մեր հոգու աչքերը ուղղված են դեպի Հայրենիքի վերելքը և սրտատուփ ակրեկություններով հետևում ենք նրա ամեն մի փայլափոխին, դեպի բարձրագույնն ու գեղեցիկը»:

Երջանի՛կ Հայրապետ, որ իր ամբողջ էությունը սիրել է Հայրենիքը, ապրել ու ոգևորել է նրանով: Հայրենիքից հեռու, բայց միշտ Հայրենիքի հետ, Փարիզում քե Նյու-Յորքում, Եգիպտոսում քե Անթիլիասում, Լույսների քե մեծության պաներին:

Սվյուտի տարագիր հայրենակարոտ հայությունն ու Հայրենիքի մայր գանգվածը իրար կամրջող, հայ մշակույթն ու հայ հոգին իրար միացնող ոսկե կամուրջն հանդիսացավ նա:

Հանգուցյալ հայրենասեր Հայրապետը եղավ այն երջանիկ ու բախտավոր Հովվապետը, որ իր օրհնություններով նամբուրեց հայրենադարձի առաջին կարավանները. «Եկել հասել է պատմական այն օրը, երբ մեր չճանաչող երկիրը լայնորեն բացել է ձեր առաջ իր դռները: Երբ մեր պատմական Հայրենիքը կգնա, ես ցանկանում եմ, որ նոր պայմանների մեջ, Հայաստանի հին փառափայլների կողքին ձեր ջանասիրությամբ, պարտականության կատարումով ետ շնախմբեք, ընդհանրապես, արժանավոր հանդիսանաք այն շնորհին ու բախտին, որ ձեզ է ընկել»:

Գեորգյան ճեմարանի սեղաններից նա իր ուշադրությունը բեռնել է մեր ժողովրդի գրական-ստեղծագործական անկորնչելի հարստությունների վրա, մեր գրչագրական, զարդագրական, մանրանկարչական ստեղծագործությունների, մատենագրության և բանահյուսության վրա: Ինչպիսի՛ մնայուն ու անժանոք գեղեցկություններ և անգին գոհարներ է հանել նա մեր անցյալի փլատեղներից, դարերի մշուշից ու դրել մեր աչքերի առաջ: Երբ Թորամանյանը հայտնագործել է

հայ ինճուրույն հարտարապետությունը, անման Կոմիտասը՝ հայ ինճուրույն երաժշտությունը, հանգուցյալ Վևր հայտնագործել է հայ ինճուրույն մանրանկարչությունն ու զարդարվեստը:

Հայ ձեռագրերի աշխարհը նրա կյանքի տարեհին է կազմել: «Մեր ազգային ամենամեծ հարստությունը, — գրել է նա, — որ ժառանգություն ենք ստացել մեր հայրերից, ձեռագրերի ժողովածուներն են: Ուրախ ենք, որ այդ հարստության ամենամեծ մասը գտնվում է մեր Հայրենիքում: Մենք պարծենալ կարող ենք ամենափառալուստ ազգերի կողքին մեր 20.000 տուփ կամ հատոր ձեռագրերով, ուր պահված են հայ մտքի և անցյալի ամբողջ արտադրությունը, մեր ազգային ամենամեծ հարստությունը»:

Սակայն Հանգուցյալի կարծիքով՝ «Մեր պատմիչները բիշ բան են տվել. մեր պատմությունը շատ ավելի գեղեցիկ է, քան ինչ որ տվել են նրանք»: Ու գտնելու համար անցյալի մշտնջենք թողված այդ «գեղեցիկ պատմությունը», նա քաղ առ քաղ ման է կրկնել պատմական Հայաստանի վայրերը, շունչ ու կենդանություն է տվել ավերակներին, էջ առ էջ քերթել մագաղաթների բուրգերը, Երևան բերել հայ ժողովրդի մշակութային մեծությունը: Ինչպիսի՜ անգնահատելի արժեքներ է փրկել նա բնաջնջումից, մոռացումից:

Իբրև պատմաբան, հնագետ, բանասեր, նա ունի գորավոր ներհայեցություն, գործի նկատմամբ ծայրահեղ բժախեղություն, անսահման սեր ու գուրգուրանք: Յուրաքանչյուր կտոր մագաղաթի, անցյալից եկած

յուրաքանչյուր քարի թեկուրի վրա նա հայ ժողովրդի ստեղծագործ հանճարի կենիք է գտնել. «Նա ավերակների մեջ կյանք և ոգի է գտնում, — գրել է նա, — լեզու, երգ, բանաստեղծություն է գտնում: Մեր ժողովուրդն էլ ավերակ է դարձել անցյալում. մենք նման ենք մեր երկրի ավերակներին, որոնք ունեն, սակայն, ստեղծագործական ուժի և շունչ և որոնք պահվել պահպանվել են ու կյանք տվել մեր երաժշտության, հարտարապետության և մյուս արժեքներին»:

Հանգուցյալի թողած ժառանգությունը, նրա գրական վաստակը, վեր է մի մարդու հարողությունից: Ավելի քան 30 մեծ ու փոքր հատորներ հրատարակված, հարյուրավոր հոդվածներ, ուսումնասիրություններ և ելույթներ էլ անտիպ գրվածներ: «Մանրանկարչության փառեզր և «Հիշատակարանի ձեռագրաց»ը բավական էին նրա անունը անմահացնելու:

Կարելի չէ սեղմ տողերի մեջ, բնդհանուր խոսքերով, սպառել Հանգուցյալի մեծակշիռ, մեծավայելուչ արժեքն ու արժանիքները:

Ամենախոր ու ամենահարգալից զգացմունքներով խոնարհվենք նրա քաղ հողակույտի առաջ:

Այոքենք նրա հոգու համար:

Աղոթենք, որ Տերը նոր մշակներ հարուցի իր վշտահար ու սգավոր Եկեղեցու համար՝ Դարեգին Կարողիկոսի կերպարով, նրա շրջով ու հոգով:

Տերը անսասան պահի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

